

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, ԿԵՍԱՐԱՑԻ. — Մբ. Զո. 1820ին. ՏՅՊ. (1843—45), սըվաճի պաշի Կեսարացի Յովհաննէս Աղայ Կարապետեանի հետ Յոպպէի Ս. Նիկողայոս եկեղեցիին կը նուիրէ 1845ին Ճաշոց մը. ինչպէս յայտնի է նոյնին ձեռագիր յիշատակարանէն: Մատթէոս վրդ. 1850ին փոխանորդ էր Պոլսի մէջ:

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ՃԳՆԱԿԻՐ. — Մբ. կը միաբանակցէր 1813ին:

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — Մբ. 1812ին քարտուղար Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին: Մեկն. Սոսմիսց Ս. Աւետարանի անուն ձեռագիրի յիշատակարանին մէջ կը յիշատակուի քարտուղար այս Մատթէոս վրդ.ը հետեւեալ կերպով. «... նաև ի վերջ բաշիս տալ զողորմին քաջ քարտուղար սրբոյ գահիս Մատթէոս նորաբողոք զիտնական վարդապետի յատուկ եղբօրս իմ ըստ հոգւոյ. մերում շահեցողի և սորին բուն օրինակը պարգևողի...» (Կան. Յոց. էջ 25):

ՄԱՐԳԱՐ ԱԲ. — Մբ. 1694ին ՏՅՊ. կը յիշատակուի Մինաս Ամդեցիին Օրագրութեան մէջ:

ՄԱՐԳԱՐԻ ԱԲ. — Մբ. ԶԺԲ (=1463)ին, Ս. Փրկչի վանքին մէջ կ'ընդօրինակէ Յայտառուրք մը և կը յիշատակէ նոյն վանքին (ՄԶ. Թ. 27): Շահեկանութեանը համար հոս կ'ընդօրինակենք Մարգարէ ար.ի յիշատակարանը. «... ես անմիտ և անիմաստ ծառայս Այ. մարգարէ սուտ անուն արեղայ գրեցի ըստ կարի իմոյ աւգնականութեամբն Այ. ու կատարեցի. յիշեցէք ի Բս. և զհոգւոր եղբայրն իմ զԱռաքել կրօնաւոր որ շատ աշխատեցաւ ի կոկել թղթիս:

Արդ՝ եղև զրաւ գրութեանս այսմ աստուածաշունչ մատենիս ի թուականութեան հայկազեան տումարի ԶԺԲ (= 1463) թվին: Ի հայրապետութեան Հայոց տեառն Կարապետի ի յերկնահանգէտ և ի հռչակաւոր սբ. մայրավանքս Երուսաղէմ ընդ հովանեաւ հրաշափառ ոմենափրկիչ կաթողիկէին, վերաձայնելոյ սբ. Փրկիչ, որ է վէմ կափարիչ սբ. Գերեզմանին քի. և այլ սբ. տնօրինականացն Աստուծոյն մերոյ Յսի. օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ աւարտեցաւ: Յիշեցէք ի Բս. զարհի եպիսկոպոսն երուսաղիմա զտէր Պետրոս և զփրկչի փակակալն, զՅակոբ կրօնաւորն և զՀայրապետ հեգանոցի արեղայն զՅովհաննէս